



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ  
նչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

2109 9

ՔԱՂԱՌՈՒՍԳԼԵՎԱՐ

ԷԿ.

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄԱՍՍԱՅԱԿԱՆ  
ԳԻՏԱԿԱՆ ԹՅՈՒՆ

№ 4

1920 թ. ՆՈՅԵՄԲԵՐԻ 29 1929 թ.


ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ  
5 ՏԱՐՈՒՄ

A I / 8806



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

ՅՈՐԵՎԱՆ—1929



Հրատ. № 1143

ՊԵՏՏՐԱՏԻ ՅԵՐԿՐՈՐԴ ՏՊԱՐԱՆ ՑԵՐԵՎԱՆՈՒՄ

---

Գրատեղի. № 2960(բ) Գատի. № 1263 Տիբ. 15000

Խ. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ  
ՀԻՆԳ ՏՍՐՈՒՄ

ՊԼԱՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

15786  
A 8806  
Միայն Մեծ Հոկտեմբերյան հեղափո-  
խությունից հետո ստեղծվեց հնարավորու-  
թյուն կազմակերպելու սոցիալիստական  
հասարակության միասնական տնտեսու-  
թյուն: Յեթն մասնավոր ձեռնարկատերերը,  
կապիտալիստական պետության իրավա-  
կարգում, ձգտելով անձնական հարստաց-  
ման և շուկաների ընդգրկման, իրենց ան-  
իշխանական դարձացման մեջ ղեկավար-  
վում էին մրցակցության սկզբունքներով  
և կլանում թույլ տնտեսությունները, — զը-  
րան հակառակ, կառուցվող սոցիալիզմի  
յերկրները՝ ԽՍՀՄ-ը՝ առաջադրում են  
ամբողջական ժողովրդական տնտեսության  
միասնական պլանավորման սկզբունքը:

Յեւնելով այն անվիճելի դրուժյունից,  
վոր միայն ամենաբարձր տեխնիկական նը-



վաճուճներն արդյունաբերության մեջ կարող են հիմնական քաղա ծառայել սոցիալիզմ կառուցելու հնարավորություններին, պրոլետարիատն իրեն նպատակ է դնում հասնել կապիտալիստական տեխնիկային և տնգամ գերազանցել այն, և ահա այս հիմքի վրա յե, վոր նա կառուցում է սոցիալիստական վերակառուցման մեծ աշխատանքների հնգամյա պլանը, դարձնելով այդպիսով ընթացիկ հնգամյակը կառուցվելիք սոցիալիզմի անհրաժեշտ պատվանդան:

### ՀՆԳԱՄԵՆ ՊԼԱՆԸ ՕՅՈՒ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հնգամյակը հանդիսանում է ԽՍՀՄ ամբողջական ժողովրդական տնտեսության միաձույլ պլանը:

Ինչո՞վ է, ուրի՞մ, քնորոշ կերպով տարբերվում արդյունաբերության զարգացումը մեզանում, Խորհուրդների յերկրում, և կապիտալիստական իրավահարգում, հատկապես ցարական նախկին Ռուսաստանում:

Դիմելով մոտակա անցյալին, մենք տեսնում ենք, վոր նախկին Ռուսաստան

նում գործարանների և ֆաբրիկաների հոծ մեծամասնութիւնը կենտրոնացած եր միւսին յերկրի կենտրոնում, իսկ կաշարութեան ծալրամասերը հանդիսանում եչին լոկ հումքի մատակարարողներ: Գործարաններն ու ֆաբրիկաները կառուցվում եչին վոչ հումքի արտադրութեան վայրերում, այլ Մոսկվայում և Պետերբուրգում: Այդպիսի տնտեսական անհեթեթութիւնը հիմնավորվում եր ցարական իշխանութեան և կապիտալիստների տիրապետող դասակարգի քաղաքական նկատառումներով, ըստ վերոնց ձեռնտու չեւ արդյունաբերական ոջախներ ստեղծել ծալրամասերում: Նրանք լավ եչին ըմբռնում, վոր ծալրամասերում գործարաններ և ֆաբրիկաներ ստեղծելով, միաժամանակ այնտեղ կստեղծվի նաև արդյունաբերական պրոլետարիատն իրեն հատուկ դասակարգային իրավազխտակցութիւնով, այն ե՝ կստեղծվի դալիք հեղափոխութեան ապագա մարտիկների կազրը:

Բոլորովին հակառակն ենք տեսնում այժմ, չերբ խորհրդային իշխանութիւնը զարգացնում ե արդյունաբերութիւնը: Մի-

ուլթյան միասնական ժողովրդական տնտես-  
 սուլթյան պլանավորման սկզբունքը կայա-  
 նույն է նրանում, վոր գործարանների և  
 ֆաբրիկաների կառուցումը կատարվում է  
 տնտեսական նպատակահարմարության  
 հատկանիշի համաձայն, այն է՝ ձեռնարկու-  
 թյունները հիմնվում են այնտեղ, վորտեղ  
 տնտեսապես ավելի ձեռնատույն, անկախ  
 այն հանգամանքից, թե վորտեղ են կա-  
 ռուցվում, կենտրոնում թե ծալրամասում:

Բացի այդ, ԽՍՀՄ ժողովրդ. տնտես-  
 սուլթյունը պլանավորելիս նկատի չեն առ-  
 նվել ազգային հանրապետություններում  
 սեփական արդյունաբերություն ստեղծելու  
 անհրաժեշտությունը:

Յեւ ահա այս սկզբունքներով ծրա-  
 դրվող և կառուցվող արդյունաբերությունը,  
 ստեղծելով ուժեղ ձեռնարկություններ ա-  
 ռանձին շրջաններում և հանրապետություն-  
 ներում տեղական հումուլթի հիման վրա,  
 միաժամանակ շաղկապում է դրանց փոխա-  
 դարձության համապատասխան իրավունքնե-  
 րով միաձուլ տնտեսական սխտեմի մեջ,  
 վորից բացիլաց հալածված է տիրապե-



տող ազգութեան մեծապետական արտա-  
հայտութիւնների վերեւ հնարավորութիւն-  
նը: Նույն հիմունքներով պլանավորվող  
Անդրկովկասյան հանրապետութիւնների  
արդշունարերութիւնը, միաձուլվելով Դաշ-  
նակցութեան (Ֆեդերացիայի) միասնական  
տնտեսութեան մեջ, ստեղծում է այն բնա-  
կան տնտեսական բազան, վորն ապելի ևս  
ամուր պիտի կապի իրար հետ Անդրկով-  
կասի բոլոր ազգութիւնները:

Յարական Ռուսաստանի քաղաքակա-  
նութիւնը արդշունարերական շինարարու-  
թեան խնդիրներում ամենաեղայտառ կեր-  
պով արտահայտվել եձայաստանի վերաբեր-  
մամբ, վորը, չնայած իր բնական լեռնա-  
լին հարստութիւններին, գլուղատնտեսու-  
կան թանաւարժեք մշակուլթներին և հսկա-  
յական ջրային միջոցներին, գրեթե զուրկ  
էր արդշունարերական ձեռնարկութիւննե-  
րից, չեթե չհաշվենք պղնձի արտադրու-  
թիւնը Ալլանվերդիում և Ջանգեդուրում և  
Յերեանի կոնյակա-գինեգործական գործա-  
րանները: Ահա թե ինչու մեզանում խոր-  
հըրդային իշխանութեան որոք արդշունարե-

րության զարգացման ուղիները մեծապես տարբերվում են Միության կենտրոնական շրջանների կացությունից: Մենք զբիթե րան չունելինք վերանորոգելու, բան չունելինք ընդարձակելու: Խորհրդային Հայաստանին վիճակվում է դեռ նոր միայն ըստեղծել իր արդյունաբերությունը, վորովհետև վոչ մի ժառանգություն, թեկուզ ավերված դործարաններ ու ֆաբրիկաներ, վոչ ցարական Ռուսաստանից, վոչ էլ մանավանդ դաշնակցական կառավարությունից նա չի ստացել: Դրան պետք է ավելացնել նաև մի շատ կարևոր բացասական հանգամանք ևս, վոր դժվարացնում է խորհրդային իշխանության աշխատանքը Հայաստանում, այն է՝ վոր մեր լերկիրը գրեթե բոլորովին ուսումնասիրված չէ, և մենք գուրկ ենք յերկրաբանական հետազոտական ավյալներից:

Խ. 4. ԱՐԿՅՈՒՆԱՐԵՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԿՈՍՄԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ

Այսպիսով պարզ է, վոր մեր արդյունաբերությունը ծրագրելիս անհրաժեշտ էր



յեւակեառ ունենալ մեր բնական հնարավորութիւնները, յերկրի բնորոշ առանձնահատկութիւնները, նրա հանքային և վոլկանային բրածոների առատութիւնը, բազմառեսակ գյուղատնտեսական մշակութիւնները և անսպառ ջրային միջոցները, վորոնք ամենաուժեղ հիմնավորում են տալիս մեզանում խոշոր եներգետիկ տնտեսութիւններ ստեղծելուն: Ընդամին կարեւորագոյն խնդիրներից մեկն է հանդիսանում՝ սխտեմատիկ կերպով ուսումնասիրել մեր բնութիւնը, դրսեորել նրա հարստութիւնները, վորպիսի նպատակի համար հնդամյա պլանով հատկապես նախատեսվում են յերկրաբանական հետազոտական աշխատանքները:

### ՏԵՐԿՐԱՐԱՆԵԿՈՆ-ՀԵՏԱԶՈՑԱԿԱՆ ԱՅԽԱՏԱՆՔՆԵՐ

Հնդամյա ընթացքում հետազոտելիք հիմնական հարստութիւնները նախագծված են թվով 19, որից: ալ՝ պղինձ, մոլիբդեն, մարգանց, պոլիմետալներ, քրոմիտ, ասբեստ, գիպս, ինֆուզորիտ, կոնգլոմերատներ, հանքային ներկեր, մագնեզիտ, մարմար, որսիդիեն, պեմզա, ծծումբ, թերթաքար, տրապս-

ներ, ածուխ և ալլիւ: Հիշալ աշխատանքներ  
 րի համար նախատեսված և ծախս  
 5.271.000 ռուբլի:

|            |       |      |    |
|------------|-------|------|----|
| 28—29 թվին | 200   | հազ. | ռ. |
| 29—30 »    | 646   | »    | »  |
| 30—31 »    | 1.280 | »    | »  |
| 31—32 »    | 1.610 | »    | »  |
| 32—33 »    | 1.535 | »    | »  |

### ՆԼԵԿՏՐԻՖԻԿԱՑԻԱ

Ինչպես արդեն ասացինք, արդյունա-  
 բերութունը մեզանում զարգացնելու հա-  
 մար ամենանպաստավոր հանգամանքներից  
 մեկը հանդիսանում և խոշորագույն էլեկ-  
 տրիֆիկացիայի հնարավորութունը մեր  
 չերկրի ջրային հարստությունների հիմունք-  
 ների վրա: Նկատի առնելով էլեկտրոններ-  
 գիայի մեծ կարիքը մեր ամբողջ ժողովրդ-  
 տնտեսության համար, հնգամյա ժամանա-  
 կաշրջանի վերջերքին ծրագրված են հե-  
 տկյալ ուժեղության ջրային էլեկտրակա-  
 յանները՝

#### Շրջանային՝

|                   |        |          |
|-------------------|--------|----------|
| Զորադես . . . . . | 14.000 | կիլովատտ |
| Քանաքեռ . . . . . | 16.000 | »        |

## Տեղակամ՝

|                      |        |          |
|----------------------|--------|----------|
| Յերեանդես . . . . .  | 4.560  | կիլովատտ |
| Լենդես . . . . .     | 5.200  | »        |
| Գյուղական 10 կայան   | 943    | »        |
| Գործարանային 4 կայան | 2.437  | »        |
| Ընդամենը . . . .     | 43.940 | »        |

Այս ամբողջ ելեկտրոսներդիան հնգամյակի վերջին սպասողներին միջև պիտի բաշխվի հետևյալ կերպով.

|                             |     |      |
|-----------------------------|-----|------|
| Արդյունաբերությանը . . . .  | 88  | տոկ. |
| Գյուղատնտեսությանը . . . .  | 7,5 | »    |
| Կոմսունակ տնտեսութ. . . . . | 4,5 | »    |

Դրա համաձայն, ելեկտրիֆիկացիայի բնադալարում դրամական ներդրումները հիշյալ ջրա-ելեկտրակայանների կառուցման համար հատկացվում են ընդամենը՝ 31 միլ. 184.000 ա. գումար, վորից՝

| Մինչև 1/X 23 թ.         |              | Հնդամյակին   |
|-------------------------|--------------|--------------|
| Չորագես                 | 1.487.000 ա. | 7.467.000 ա. |
| Քանաքեռդես              |              | 8.500.000 »  |
| Յերեանդես               | 1.785.000 »  | 735.000 »    |
| Լենդես                  | 2.053.000 »  | 1.535.000 »  |
| Իջևանի կայար. 235.000 » |              | 738.000 »    |
| Գյուղ. ելեկար. 80.000 » |              | 1.209.000 »  |
| Հաղորդման գիծ           |              | 5.360.000 »  |
| Ընդամենը՝               | 5.640.000 »  | 25.544.000 » |



Գալով ինքնարժեքին, 1 կիլովատտ-  
ժամ եներգիան կարժենա.

28—29 թ.

32—33 թ.

|              |        |             |
|--------------|--------|-------------|
| Ձորագես      | —      | 1 ու. 35 կ. |
| Քանաքեռգես   | —      | 0,90 »      |
| Յերևանգես    | 2,3 կ. | 1,60 »      |
| Լենինականգես | 4,3 »  | 2,00 »      |

### ՀԱՅԿԻ ՐԱՁՈ

Հայաստանի արդյունաբերական զարգացումը հենվում է գլխավորապես լիբերի բնական լեռնային հարստությունների, նրա տեխնիկական մշակույթների և եժան ելեկտրոններգիայի վրա: Ուստի և հնգամյակը նախատեսում է մեզանում՝

1) Լեռնային արդյունաբերության զարգացումը՝ «Հայպղինձ», «Արթիկ-տուֆ», «Հայ-սլեմգա», «Լեռնինարդ» (մարմար, գրանիտ, ցեմենտ) և ծծմբային արջասպ (կալչեղան):

2) Քիմիական արդյունաբերություն, ցիանամիդ, ծծմբաթթու, պղնձի կուպորոս, կարբիդ, քաղցաթթու:

3) Գյուղատնտեսական հումքի մշակման



արդյունաբերություն՝ «Հայտեքստիլ» (բամբակ), «Արարատ» տրեստ (խաղող), Կոնսերվշին (պտուղներ և բանջարեղեն), կրախմալի գործարան (գետնախնձոր), շաքարի գործարան (ճակնդեղ), և բացի այդ կատարվում և հետևյալ՝ արդեն գոյություն ունեցող՝ ձեռնարկությունների ընդարձակումը, որինակ՝ «Հայանոտա» տրեստ «Կաշվարդ», նաև

4) Ընդհանուր բնույթ կրող արդյունաբերական ճյուղերի, վորոնց գոյությունն անհրաժեշտորեն կապված և մեր ամբողջ ինդուստրիալ զարգացման հետ, որինակ, մեխանիկական գործարան, «Հայպոլիդրաֆ» կայլն, վորոնք սպասարկում են մեր արդյունաբերության և առհասարակ ընդհանուր կուլտուրայի կարիքները:

## ԲՈՎԱՆԳԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԸ ՅԵՎ ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՈՒՓԸ

Բովանդակ արտադրանքի աճումը, անփոփոխ դներով, նաև բանվորների քանակը հնգամյակի սկզբին և վերջերքին արտահայտվում և հետևյալ սովյալներով՝

**ԲՈՎԱՆԴԱԿ ԱՐՏԱԴՐԱՆՔԸ ՅԵՎ ԲԱՆՈՒԺԸ**

| Խ. Խ. | Ձեռնարկագրերը               | Բովանդակի արտադրանք |               | Բանվորների քանակը |               |
|-------|-----------------------------|---------------------|---------------|-------------------|---------------|
|       |                             | 1928-29<br>թ.       | 1932-33<br>թ. | 1928-29<br>թ.     | 1932-33<br>թ. |
| 1     | Հայադղինձ . . . . .         | 5.490,9             | 23.918,7      | 2.719             | 4.295         |
| 2     | Արթիկ-առուֆ . . . . .       | —                   | —             | —                 | —             |
| 3     | Հայ-պեմդա . . . . .         | 709,0               | 7.200,0       | 241               | 1.714         |
| 4     | Մեխանիկ. գործարան . . . . . | 303,8               | 3.500,0       | 120               | 350           |
| 5     | Հայանառ . . . . .           | 746,2               | 3.500,0       | 134               | 352           |
| 6     | Լեռնաշինարդ . . . . .       | 118,8               | 2.500,0       | 91                | 230           |
| 7     | Ցեմենտի գործարան . . . . .  | —                   | 4.200,0       | —                 | 315           |
| 8     | Կարբիդի » . . . . .         | 833,7               | 2.652,0       | 64                | 74            |
| 9     | Ցեմենտիդ . . . . .          | —                   | 1.654,0       | —                 | 116           |
| 10    | Ծծմբաթթու . . . . .         | —                   | 345,3         | —                 | 40            |

|                      |                            |          |           |       |        |
|----------------------|----------------------------|----------|-----------|-------|--------|
| 11                   | Պրննիկի կուլպորու . . . .  | —        | 755,0     | —     | 20     |
| 12                   | Ծծմբային արջապ . . . .     | —        | 1,500,0   | —     | 400    |
| 13                   | Գազի գործարան . . . .      | —        | 350,0     | —     | 25     |
| 14                   | Գազակաթի թու . . . .       | —        | —         | —     | —      |
| 15                   | Հայկական ակում . . . .     | —        | —         | —     | —      |
| 16                   | Հայկական քուղի . . . .     | 7.575,2  | 48.809,6  | 2,067 | 5,819  |
| 17                   | Կարաբաղ . . . . .          | 573,1    | 6.591,3   | 188   | 475    |
| 18                   | Կաշվարդ . . . . .          | 1.934,4  | 3.871,0   | 131   | 184    |
| 19                   | Հայկական գործարան . . . .  | 296,9    | 1.200,0   | 141   | 259    |
| 20                   | «Արարատ» . . . . .         | 4.563,8  | 6.500,0   | 163   | 192    |
| 21                   | Շաքարի գործարան . . . .    | —        | —         | —     | —      |
| 22                   | Կոնստանդնուպոլիս . . . . . | —        | 1.255,0   | —     | 297    |
| 23                   | Կաշվարդի գործարան . . . .  | —        | 379,0     | —     | 76     |
| 24                   | Միլիտարի գործարան . . . .  | 161,6    | 750,0     | 51    | 150    |
| Ընդամենը՝ . . . .    |                            | 23,307,4 | 121.430,9 | 6,110 | 15.383 |
| Միջակ օ/օ-ով . . . . |                            | 100%     | 521,6%    | 100%  | 252,3% |



Ինչպես տեսնում ենք սույն աղյուսակից, հնգամյակի ընթացքում Հայաստանի ոչտական արդյունաբերական ձեռնարկությունների բովանդակ արտադրանքն աճում է գրեթե  $5\frac{1}{2}$  անգամ, մինչդեռ բանվորների քանակը՝ միայն  $2\frac{1}{2}$  անգամ, վորը աշխատանքի արտադրողականության նախագծվող բարձրացման հետևանքն է հանդիսանում:

### ԱՅԽԱՏԱՆԱԲԵՐ ԵՅՎ ԱՅԽԱՏՆԵՐ ԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Սակայն աշխատանքի արտադրողականության աճման հետ միասին, վորը բնական է աշխատանքային դիսքիպլինայի բարձրացումից և պրոլետարիատի ունեցած գիտակցական վերաբերմունքից դեպի իր պատմական դերը, հնգամյա ծրագիրը նախատեսում է նաև աշխատանքի պայմանների լավացումը և բանվորների իրական աշխատավարձի բարձրացումը: Այսպես, ժողտնտգերխորհին յենթակա արդյունաբերության մեջ աշխատանքի արտադրողականության բարձրացման հետ, վոր 28/29 թվի հետ համեմատած աճելու յե 107,1 տոկոսով, նույն հնգամյակի վերջին ծրագրված է բանվորի աշխատավարձի բարձրացումը 53 ա, 87 կոպեկից մինչև 74 ա. 57 կ., այս-



ինքն՝ 38,4 %-ով, ընդլորում դատ-դատ  
 ձեռնարկություններում աշխատավարձը տա-  
 տանվում է 59 ա. 94 կոպեկի և 89 ա. 75  
 կոպեկի սահմաններում:

### ԳՐԼՄԱԿԱՆ ՆԵՐԳՐՈՒՄՆԵՐ

Այս առաջադիմությունը, սակայն, հնարա-  
 վոր է միայն խոշոր գրամական ներդրում-  
 ների դեպքում, վերալիսի ներդրումները  
 ԺՏԳԽ-ին յենթակա վողջ արդյունաբերու-  
 թյան մեջ արտահայտվում են 60.640.000 ա.  
 ընդհանուր գումարով: Պետք է նշել այս-  
 տեղ, վոր այս գումարի մեջ չեն մտնում  
 լիբեք՝ միութենական նշանակություն ու-  
 նեցող ձեռնարկություններին հատկացված  
 ներդրումները՝ Հայպղնձինը, Արթիկ-տու-  
 ֆինը և Հայրամբակիումինը:

Ըստ առանձին-առանձին ձեռնարկու-  
 թյունների գրամական ներդրումները դա-  
 տավորվում են հետևյալ կերպով.

1. Հայ-պեմդա . . . . . 7.500.000 ա.
2. Ծծմբային արջասպ . . . 2.500.000 »
3. Միխան. գործարան . . . 1.000.000 »
4. Ճեմենաի գործարան . . . 4.200 000 »
5. Հայանասա . . . . . 4.100.000 »
6. Լեռնիշարդ . . . . . 2.240.000 »

|                                 |            |    |
|---------------------------------|------------|----|
| 7. Հայկետշին . . . . .          | 1.000.000  | ռ. |
| 8. Կարբիդի գործարան . . . . .   | 380 000    | »  |
| 9. Ցիանամիդի . . . . .          | 3.600.000  | »  |
| 10. Ծծմբաթթու . . . . .         | 1 700.000  | »  |
| 11. Պղնձի կուպորոս . . . . .    | 480.000    | »  |
| 12. Հայտեքատիլ . . . . .        | 19.500.000 | »  |
| 13. Կարարդ . . . . .            | 560.000    | »  |
| 14. Կաշվարդ . . . . .           | 1.200.060  | »  |
| 15. Հայպոլիդրաֆ . . . . .       | 1.300.000  | »  |
| 16. Շաքարի գործարան . . . . .   | 6.000 000  | »  |
| 17. Արարատ . . . . .            | 1 400.000  | »  |
| 18. Կոնսերվշին . . . . .        | 1.350 000  | »  |
| 19. Կրախմալի գործարան . . . . . | 450.000    | »  |
| 20. Գաջի գործարան . . . . .     | 180.000    | »  |

Ընդամենը . . . 60.640.000 ռ.

### ՀԻՄՆԱԿԱՆ ԺԱԽՈՒՆԵՐԻ ՓԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ ՅԵՎ ԻՆՔՆԱՐԺԵՔԻ ԻԶՅՈՒՄԸ

Հիմնական ծախսերի ֆինանսավորումն ընթանում է գլխավորապես միութենական բյուջեյի գծով և վորոշ մասով մեր արդյունաբերության ներքին կուտակումների հաշվին, վորոնց չափն աճնքան մեծ է լինում, վորքան մեղ հաջողվում է իջեցնել մեր արտադրանքի ինքնարժեքը: Այս վերաբերմամբ հնդամյա պլանը ծրարրում է հինգ տարվա ընթացքում ինքնարժեքը միջին հաշվով իջեցնել 32,7 %-ով: Ինքնար-

ժեքի իջեցման դուգընթաց ծրագրվում և նաև բարձրացնել արտադրանքի վորակը և իջեցնել վաճառքի գները, միջին թվով Հայաստանի ԺՏԴԽ-ին լեկթակա ամբողջ արդյունաբերության մեջ 24,4 % -ով, ըստ առանձին ձեռնարկությունների տարվ տատանումներ՝ 7,78 % -ից մինչև 47,8 % -ը:

### ՀՆԳԱՄԱՐՈՎ ԺՐԱԳՐՎԱԾ ԱՆՆԻՔՆԵՐԻ ՀՆԱԲԱՎՈՐՈՒԹՅԱՆԸ

Մասնանշելով այն դժվարությունները, վորոնք պիտի հաղթահարվեն ազերված տնտեսությունը վերականգնելու ուղինեքում, անհամեմատ մեծ են այդ դժվարությունները ներկա ժամանակաշրջանում, յերբ մենք ձեռնարկել ենք տնտեսության ամբողջ սիստեմն ընդլայնելու և վերակառուցելու: Յիվ այդ դժվարություններն են, վոր սարսափեցնում են շատերին, վհատեցնում այնչափ, վոր սկսում են կասկածել պրոլետարիատի շինարարական ուժի և ստեղծագործական յեռանդի վերաբերյալ: Շատերին վախեցնում են սկսված զարգացման աներևակայելի բարձր տեմպերը, աշխատանքի տենդոտ լարվածությունը:

Թերահավատների այդ վարանոտ սրամազրություններին պրոլետարիատը հպար-



տուլթյամբ կարող է պատասխանել իր ան-  
ցալով, հիշեցնելով նրանց իր կռիվների,  
զրկանքների և հաղթանակների մի շարք  
տարիները: Իսկ վոր հնգամյակը ռեալ պլան  
ե, մեզ այդ ցույց են տալիս հնգամյակի ա-  
ռաջին տարվա մեջ (28/29 թ.) կատարած  
աշխատանքների հետևանքները:

### ՀՆԳԱՄԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԱՐՎԱ ԱՆՆԻՔՆԵՐԻ ԿԱՏԱՐԱԾԸ

10. Հայաստանի ԺՏԴԽ-ին յենթակա  
ձեռնարկությունների աշխատանքն անցյալ  
28/29 թ. արտահայտվում է 21-րդ եջի տ-  
ղյուսակի տվյալներով:

Ինչպես տեսնում ենք հիմնական ցու-  
ցանիշների այդ համեմատական աղյուսա-  
կից, առաջին տարվա պլանն իրագործված  
է ավելի քան ըավարար կերպով: Պլանի  
թերակատարումը մենք տեսնում ենք  
սիայն բովանդակ արտադրանքի մեջ, այն  
ել՝ արդյունաբերությունից անկախ պատ-  
ճառներով: Արտադրական ծրագրի այս մի-  
ջիչ անբավարար կատարման վրա ազդել է  
այն, վոր Հայտեքստիլը չի կատարել իր  
անելիքները 40<sup>0</sup>/ո-ով, վորպիսի հանգա-  
մանքը ըղխեց Լենինականի հիդրոկայանի  
ուշացումով աշխատանքի գցելուց (2 ամս-  
վա ուշացում), նրա 23 որվա զադարից



| № № | Հիմնական թույլատրված.                         | Պլանով                        | Ի ր ո թ                          | ԿԱՏԱՐ.<br>ո/ո                    |
|-----|-----------------------------------------------|-------------------------------|----------------------------------|----------------------------------|
| 1   | Բովանդակի արտադրանք<br>(ամսիկովի և գնելով) .  | 18,657.000                    | 16,836,000                       | 90,2 <sup>0</sup> / <sub>0</sub> |
| 2   | Բանվորների քանակը .                           | 3.509                         | 3,217                            | 91,6 »                           |
| 3   | Մեքենայական աշխատավարձ . . . . .              | 50—10                         | 50—64                            | 101,1 »                          |
| 4   | 1 քանակով մեքենայական<br>կան ժողովածք . . . . | 431—00                        | 426—50                           | 99,0 »                           |
| 5   | Ինքնաբերական էլեկտրոն .                       | 9 <sup>0</sup> / <sub>0</sub> | 13,2 <sup>0</sup> / <sub>0</sub> | 148,9 »                          |
| 6   | Հիմնական ներդրում . .                         | 7.117.200                     | 7,358,800                        | 103,4 »                          |

(գեկտեմբեր—հունվարին) և մտնած տարածա-  
րանի համար գերմանական սարքավորման  
ուշ ժամանակույց:

Առանց Հայտեքստիի մենք ունենք  
արտադրական ծրագրի 1110/0:

Արտադրական ծրագրի թերակատա-  
րումից առաջացել է նաև բանվորների քա-  
նակի համապատասխան կրճատումը:

Հատկապես կարևոր է այստեղ ընդ-  
գծել ինքնարժեքի վերաբերմամբ ձեռք բե-  
րած նվաճումները. ինքնարժեքը փոխանակ  
90/0-ի իջեցված է 13,20/0-ով: Պլանի թե-  
րակատարումն աշխատանքի արտադրողա-  
կանության բնագավառում 10/0-ով և աշ-  
խատավարձի աճումը 10/0-ով պետք է բա-  
ցատրել նրանով, վոր տեխնիկական նոր-  
մալացման գործն առայժմ թույլ է գըր-  
ված:

Այս նվաճումներն ավելի ևս մեծ նշա-  
նակություն են ստանում, լերբ մենք 28/29  
թվի փաստորեն կատարած աշխատանքը  
համեմատում ենք 27/28 թվի տվյալների  
հետ:

| № յԵ | ՀիՄՆԱԿԱՆ ՅՈՒՑԱՆԻՇ.                       | 27/28 Բ.  | 28/29 Բ.   | % 27/28 Բ. |
|------|------------------------------------------|-----------|------------|------------|
| 1    | Բովանդակ արտադրանք<br>(անփոփոխ գնեցով)   | 9,066,584 | 16,836,100 | 185.7%     |
| 2    | Բանվորներին քանակը                       | 2,077     | 3,217      | 154.9      |
| 3    | Մեջին ամսական աշխատավարձ . . . . .       | 48—79     | 50—64      | 103.9      |
| 4    | 1 բանվորի մեջին ամսական մշակվածք . . . . | 352—30    | 426—50     | 121.0      |
| 5    | Ինքնարժեքի իջեցում.                      | —         | 13.2%      | —          |
| 6    | Հիմնական ներդրում . .                    | 4,185,700 | 7,358,800  | 175.8      |



[104.]

A 8806

ՀԵՂԵՍԵՆԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ, ԻՆՔԵՆՔԵՆՆԱԳՈՒԹՅՈՒՆԸ  
ՕՅՎ ՍՈՑ. ՄԲՈՒՄԸ

Նշելով բոլոր մեր նվաճումները, վոր  
մենք ունեցել ենք հնգամյակի առաջին  
տարվա մեջ, թե 27—28 թվի հանդեպ և  
թե պլանի համեմատությամբ, պետք է, այ-  
նուամենայնիվ, չմոռանանք, վոր այս ձեռք  
բերած նվաճումների վրա պրոլետարիատը  
չի կարող հանգչել, վոր նա պիտի ձգտի  
շարունակ դեպի առավելը, պիտի յուրաց-  
նի կապիտալիստական ամբողջ անխնիկան  
և ռապիտնալիզացիան և անդամ գերազան-  
ցի այն:

Այս նպատակի համար է, վոր մենք  
առանց աչք փակելու մեր բացերի վրա,  
խսկական ինքնաքննադատության միջոցով  
պիտի բանանք մեր թերությունները, մեր  
անկարգությունը, վարչության բյուրոկրա-  
տիզմը, դիմադրենք պրոլետարիատի հե-  
տաճանաց խավերի հատուկ պոկողական  
բնադդներին, և մի կամք ու մի ձգտում  
սրտներում՝ արագացնելով սոցիալիստա-  
կան շինարարությունը, սոցիալիստական  
մրցման ուղիով վերացնենք մեր անցյալի  
բացերը և վնասները և առարկենք ճշտիվ,  
այլ և գերակա յերկրորդ տարի

ԳԱՍ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0045722